



40. ՉՈՒԱԽ ԿՆԻԿ

Քիր ու աղբեր են ընում: Աղբերը իրա համար կնիկ ա առնում: Քիր ու աղբեր ջատ սիրով էին իրար հետ: էս դուր չէկավ՝ աղբոր կնկանը, ուզում էր մի կերպով քիր ու աղբեր իրարից բաժանի: Սա կարաց իրա ուզածը անել: Սա մի աղջիկ ծնեց, մի գիջեր մորթեց ու արնոտ դանակը դրեց քրոջ ջերը: Առավոտ մարդ ու կնիկ շատ զարմացան, համա իզուր:

Շատ ման գալուց հետո կինը ասեց.— Մի՛ քվորդ ջերն էլ մանարի:

Աղբերը մնաց շշմած, երբ նրա ջերից հանեցին արինթաթախ դանակը: Աղբերը իրա նոքարներին հրամայեց, որ նրա ոտները կտրեն ու տանեն գցեն մեջքը, թո՛ղ ընտեղ գելերը ուտեն նրան: Նոքարները աղի հրամանը կատարեցին: Նյա ոտները կտրեցին ու տարան գցեցին հեռու մեջքը:

էս մեջքանց մոտով անց էին կենում մի քանի նազիրներ: Կնկա ձենը լսելով, սրանք գնացին ու տեհան մի սիրուն կնիկ, ոտները կտրած ստեղ գցել են:

Նազրներից մինը ասեց.— Ծս պտի տանեմ սրան իմ տունը ու կնիկ ջինեմ ինձ:

Մեկել վեզիրները շատ ասեցին, որ շուախին տուն ա տանում
ի՞նչ անի, համա նա նրանց խոսքին ականջ չդրեց: Վեր կալավ ու
տարավ իրա տունը ու պսակվեց նրա հետ:

Մի անգամ էս վեզիրը գնաց ուրիշ երկիր: էս Չուախ կնիկը
ծնեց մի ոսկեքաքու պղա ու մի աղջիկ՝ ճկուտը ոսկի: Մի նամակ
դրեցին, տվին նոքարին ու ուղարկեցին վեզիրին: Ճամփին նոքարը
վեր էկավ Չուախի աղբոր տանը: Չուախի աղբոր կնիկը նրան մին-
մին հարցրեց ու իմացավ, թե բանը ընչու՞մն ա: Միտք արեց, որ
նրա ջերից նամակը հանի, թարս գրի: Մի գիշեր նա էղպես էլ
արեց. շերից հանեց նամակը ու նրա տեղակ գրեց. «Քու կնիկը
էրկու շան ճուտ ա բերել, դեն գցե՞նք, թե պահենք, որ գաս»: Նոքարը
առավոտը վեր կացավ ու գնաց իրա աղի քաղաքը ու
տվեց նամակը նրան: Վեզիրը նամակը կարդալով՝ դրեց. «Թե
շան ճուտ ա՝ ինչորիս ա, պահեք մինչև որ ես դամ»: Նոքարը նա-
մակը շերին ետ էկավ ու ճամփին էլի Չուախի աղբոր տանը վեր
էկավ: էլի նրա աղբերակինը գիշերը շերից նամակը հանեց ու
կարդալով՝ նրա տեղը էս դրեց. «Ոսկեքաքու, ոսկեճկուտ էրեխեք
են՝ ինչ որ են, ծովը գցեք, որ չգամ ու տենամ նրան»:

Առավոտը նոքարը վեր կացավ ու ճամփա րնկավ իրանց եր-
կիրը: Նամակը տարավ տվեց տանըցոնց: Երբ կարդացին՝ շատ լաց
էլան, շէին ուզում, որ նրան ծովը գցեին, համա ո՞նց անեին՝ վե-
զիրի հրամանն էր: Վեր կալան մանդր էրեխանցր ու նրա մորը
դրին մի ղութկի մեջ ու գցեցին ծովը: Ջուրը տարավ ու մի ցամա-
քի ղրաղ հանեց: Մերը իրա էրեխեքանցով ղութկից դուրս էկավ
ու իրա համար ըստեղ տուն շինեց ու բնակվում էր: Օրեցօր նրա
էրեխեքը մեծանում էին:

Հիմա գանք դպա վեզիրը: Նա տուն ետ դառնալով շատ ու
շատ զարմացավ, երբ տեհավ որ ոչ իրա կնիկը կա, ոչ էրեխեքը,
որ նոր էին ծնվել: Գլուխդ ինչ ցավացնեմ, իմացավ բանի ընչու-
թյունը:

Նոքարին հարցրեց.— Գիշերը ում տանը վեր էկար:

Նա ասեց.— Քու կնկա աղբոր կուշտը:

էն սհաթին ձին նստեց ու գնաց նրա տունը: Մին ու մին
պատմեց իրա կնկա աղբորը իրա գլխով անցկացածը: Նա նոր
իմացավ իրա սխալմունքը.

— էս սատանությունը, — ասեց, — էլի իմ շար կնկա բանը

Արլնի,— ու հրաման տվեց իրա նոքարներին, որ նրան թիքա-թիքա անեն:

Վեզիրը ու Չուլխի աղբերը մի-մի ձի նստած գնացին նրան ման գալու: Մովը բռնեցին ու գուզ գնացին: Մովի ղրաղում երկար ման գալուց հետո նրանք մի տուն տեհան ու էս տան առաջ էրկու էրեխեք հաղ էին անում իրար հետ:

Մոտեցան էս էրեխեքանցը ու հարցրին.— Մեկ օրով ղոնաղ չե՞ք ուզի:

Երեխեքը պատասխան տվին.— Մեր մերը անոտ ա, ղոնաղ չի սիրում:

Վեզիրը մատը կծեց ու մտքումը ասեց. «Բալի, որ սա տ»: Քրկուսն էլ ներս մտան ու տեսան մի ոտները կտրած կնիկ կար էր անում: Էն սհաթը ճանաչեցին նրան: Իրարու փաթթվեցին ու լաց էղան:

Մորը իրա էրեխեքանցով տարան տուն: Էլի նա վեզրի կնիկն էր ու ուրախ իրար հետ ապրում էին:

